ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

**1** **Նկարում պատկերված է.**

1) 1մ$^{3}$ օդում առկա թունավոր գազերի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության
2) օդի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության
3) թթվածնի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության
4) օդի ճնշման նվազումը՝ ըստ բարձրության




**2** **Հյուսիսային բևեռային շրջագծի և նրանից հարավ գտնվող Ա կետով անցնող զուգահեռականի միջև իրական ամենակարճ հեռավորությունը կազմում է 2664 կմ: Ա կետի աշխարհագրական լայնությունը կլինի.**

1) հս.լ 24,5˚
2) հս.լ 28,5˚
3) հս.լ 42,5˚
4) հս.լ 36,5˚

**3** **Երկու կետերի ուղիղ գծով հեռավորությունը քարտեզի վրա 16սմ է, իսկ քարտեզի մասշտաբը՝ 1:2400000: Երկու կետերի իրական հեռավորությունը կլինի.**

1) 3840կմ
2) 150կմ
3) 15կմ
4) 384 կմ

**4** **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Երևանի գոտիական ժամանակը առաջ է Տոկիոյի գոտիական ժամանակից:
2) Հասարակածի աշխարհագրական լայնությունը 90˚ է, իսկ բևեռներինը՝ 180˚:
3) Հունիսի 22-ից մինչև սեպտեմբերի 21-ը հս.լ 66˚300′-ից հյուսիս բևեռային ցերեկների տևողությունը կրճատվում է:
4) Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտները (գետեր, քամիներ և այլն) շեղվում են իրենց սկզբնական ուղղությունից հյուսիսային կիսագնդում՝ դեպի աջ, հարավայինում՝ ձախ:

**5** Այն օդը, որն իր մեջ եղած ջրային գոլորշիներից ավելին չի կարող ընդունել կոչվում է.

1) չոր օդ
2) հագեցած օդ
3) ամպ
4) մառախուղ

**6** Երկու ջրամերժ շերտերի միջև գտնվող ստորերկրյա ջրերը կոչվում են.

1) միջշերտային
2) քաղցրահամ
3) գրունտային
4) հանքային

**7** Քարտեզի վրա հավասար մթնոլորտային ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է.

1) իզոբար
2) իզոբաթ
3) իզոթերմ
4) իզոհիպս

**8** Երևան քաղաքում հունվարի 10-ին դիտվել է հետևյալ օդի ջերմաստիճանները՝ -5˚, -9˚, -6˚, -4˚, 3˚, 5˚, 2˚,-2˚: Օդի օրական միջին ջերմաստիճանը կլինի.

1) -2˚
2) -4˚
3) 2˚
4) 3˚

**9** Ռելիեֆի կտրվածքի ո՞ր կետում են թափվում ամենաշատ տեղումներ:




1) Գ
2) Դ
3) Ա
4) Բ

| 10 | **Նկարում պատկերված է Երկրի դիրքը Արեգակի նկատմամբ.** |
|---|---|

1) դեկտեմբերի 22-ին
2) մարտի 21-ին
3) հունիսի 22-ին
4) սեպտեմբերի 23-ին




| 11 | **Բարեխառն ծովային կլիման բնորոշ է.** |
|---|---|

1) Ուրալյան լեռներից արևելք ընկած շրջաններին
2) Ավստալիայի ծայր հարավ-արևմտյան մասին
3) Պատագոնիայի արևելյան առափնյա շրջաններին
4) Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան մասերին

| 12 | **Ո՞ր բնական զոնային են առավելապես բնորոշ քամու ներգործության շնորհիվ ստեղծված ռելիեֆի ձևերը:** |
|---|---|

1) հասարակածային խոնավ, մշտադալար անտառների
2) բարեխառն գոտու անտառների
3) սավաննաների և նոսրանտառների
4) անապատների և կիսաանապատների

| 13 | **Այդ կղզու գրեթե կենտրոնով է անցնում հասարակածը: Այդ կղզին Մալակկայի նեղուցով բաժանվում է Մալակկա թերակղզուց: Այդ կղզին է.** |
|---|---|

1) Ճավան
2) Սուլավեսին
3) Կալիմանտանը
4) Սումատրան

| 14 | **Ո՞ր պնդումն է ճիշտ:** |
|---|---|

1) Մեծ Արջի, Մեծ Ստրուկների լճերը առաջացել են գետահուների լավային արգելափակման հետևանքով:
2) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային ծովեզերքին՝ հարակից կղզիների տարածքում, տարածվում է խառը և լայնատերև անտառների զոնան:
3) Հյուսիսային Ամերիկայում լայնակի ձգվող լեռների բացակայության շնորհիվ օդային զանգվածները ազատ շրջանառություն են կատարում՝ երբեմն առաջացնելով հզոր պտտահողմեր:
4) Կալիֆոռնիական սառը հոսանքի ազդեցության շնորհիվ առափնյա շրջաններում թափվում են առատ տեղումներ:



**(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330 մմ:**

| 77 | Որոշել լեռան հարաբերական բարձրությունը: |
|---|---|

| 78 | Որոշել լեռան բացարձակ բարձրությունը: |
|---|---|

**(79-80) Երկրի բնակչության թիվը 40 000 000 է, քաղաքաբնակների բացարձակ թիվը՝ 16 000 000, տարածքի մակերեսը՝ 200 000 կմ$^2$:**

| 79 | Որոշել ուրբանիզացման մակարդակը: |
|---|---|

| 80 | Որոշել բնակչության միջին խտությունը: |
|---|---|

75 **Քարտեզի վրա ՀՀ հողային ո՞ր տիպն է նշված Ա տառով:**




1) աղուտ-ալկալի հողեր (աղուտներ)
2) լեռնային սևահողեր
3) կուլտուր-ոռոգելի հողեր
4) անապատակիսաանապատային

76 **Որոշել գետի հոսքը 1ժամում, եթե գետի ջրի արագությունը 1.5 մ/վ է, իսկ գետահունի լայնակի կտրվածքի մակերեսը 6մ$^{2}$:**



15 **Ո՞ր պնդումն է** ***սխալ:***

1) Ամենաշատ տեղումներ ստանում են Մեծ Ջրբաժան լեռնաշղթայի հյուսիսային հատվածի հողմակողմ լանջերը:
2) Էվկալիպտները տարածվում են բացառապես անապատների և կիսանապատների գոտում:
3) Ավստրալիայի հյուսիս-արևելյան ափերը ողողող Կորալյան ծովի մակերևութային տաք ջրերում բուռն զարգանում են կորալային պոլիպները:
4) Ավստրալիայի մակերևույթի հիմքում ընկած է Ավստրալիական հնագույն պլատֆորմը:

16 **« Նեղուց-ղրանով բաժանված կղզի » սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է ճիշտ:**

1) Թորեսի-Թայվան
2) Բերինգի-Գրենլանդիա
3) Մագելանի-Հրո Երկիր
4) Բաբ-Էլ-Մանդեբի-Մադագասկար

17 **«Լեռնային համակարգ-լեռնագագաթ» սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է ճիշտ:**

1) Ապալաչներ-Կոսցյուշկո
2) Էլբուրս- Դեմավենդ
3) Մեծ Կովկաս-Արարատ
4) Անտարկտիկական Անդեր-Ակոնկագուա

18 **Ասիա աշխարհամասում հոսող գետեր են.**

1) Վոլգան և Դանուբը
2) Թեմզան և Հռենոսը
3) Օբը և Ինգուրին
4) Դնեպրը և Դոնը

19 **Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Վիկտորիա լիճը:**




1) Գ
2) Դ
3) Ա
4) Բ

20 **Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Պրետորիա մայրաքաղաքը:**

1) Է
2) Ը
3) Ե
4) Զ

21 Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումը և վերաբաշխումը` ըստ բնակավայրերի ու դրանց համակարգերի կոչվում է.

1) բնակչության տեղաբաշխում
2) տարաբնակեցում
3) միգրացիա
4) ուրբանիզացում

22 Բնական շարժի հետևանքով մարդկանց սերունդների անընդհատ վերարտադրության և հերթափոխման գործընթացի ամբողջությունը կոչվում է.

1) բնակչության վերարտադրություն
2) բնակչության մեխանիկական շարժ
3) ժողովրդագրական պայթյուն
4) ժողովրդագրական ճգնաժամ

23 Հարավ-Արևելյան Ասիայի այդ երկիրն ամբողջությամբ ընկած է կղզիների վրա: Բնակչության մեծ մասը դավանում է քրիստոնեություն: Այդ երկրում կաուչուկի հումք են ստանում նաև կոկոսյան արմավենուց: Ո՞րն է այդ երկիրը:

1) Բրունեյ
2) Մյանմա
3) Ինդոնեզիա
4) Ֆիլիպիններ

24 Երկրում ածխի պաշարները կազմում են 2,4մլրդ. տ: Արդյունահանման տարեկան չափը պահպանելու դեպքում այն կբավականացնի 375 տարի: Որքա՞ն է ածխի արդյունահանման տարեկան չափը (արտահայտած` տոննայով):

1) 2025000
2) 1350000
3) 6400000
4) 1562500

25 «Պետություն – տիրապետող կրոն» սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է *սխալ:*

1) Ճապոնիա-սինտոիզմ
2) Վրաստան-քրիստոնեություն
3) Իրան-հուդայականություն
4) Ադրբեջան-մահմեդականություն

26 «Պետություն-պատկանող կղզի» սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է *սխալ:*

1) Հունաստան-Կիպրոս
2) Ավստրալիա-Թասմանիա
3) Ֆրանսիա - Կորսիկա
4) Դանիա-Գրենլանդիա

27 «Հողաբարելավման միջոցառում-բնական օբյեկտ» սկզբունքով տրված զույգերից ո՞րն է *սխալ:*

1) արհեստական ոռոգում-մշակովի հողեր
2) հակաէրոզիոն միջոցառում- ձյունամերձ լանդշաֆտներ
3) չորացում (ցամաքեցում)- գերխոնավ հողեր
4) քիմիական մելիորացում-աղուտներ



74 Տրվածներից ո՞րն է զբաղեցնում քարտեզի վրա Ա տառով նշված տարածքները:



1) արկտիկական անապատները
2) անտառատափաստանները և տափաստանները
3) փշատերև անտառները
4) տունդրան և անտառատունդրան

69 Ի՞նչն է ընդհանուր Գյումրի և Հրազդան քաղաքների համար:

1) գործում են հզոր ջերմաէլեկտրակայաններ
2) գործում են ցեմենտի արտադրության խոշոր ձեռնարկություններ
3) երկաթուղային հանգույցներ են
4) նրանց միջով է հոսում Հրազդան գետը

70 ՀՀ տրված մարզերից որի՞ տարածքում է գտնվում «Դիլիջան» ազգային պարկը:

1) Շիրակի
2) Արարատի
3) Սյունիքի
4) Տավուշի

71 Ո՞ր զույգում են տրված խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհի առաջատար երկրները:

1) Թուրքիա և Աֆղանստան
2) Իրան և Մոնղոլիա
3) Ճապոնիա և Ղազախստան
4) Հնդկաստան և Բրազիլիա

72 Տրվածներից ո՞րն է մթնոլորտի աղտոտման հետևանք:

1) գերխոնավ հողերի բերրիության անկում
2) ջերմոցային էֆեկտի առաջացում
3) ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացում
4) էրոզիոն երևույթների զարգացում

73 Ո՞ր պնդումն է *սխալ:*

1) Մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուրներից է մետաղաձուլությունը:
2) Ջրավազաններն աղտոտող հիմնական նյութերը աերոզոլներն(օդակախույթ) են:
3) Անտառապատ տարածքների կրճատումն ուղեկցվում է գենոֆոնդի աղքատացմամբ:
4) Ջերմոցային էֆեկտի հետևանքով բարձրանում է ներքնոլորտի տարեկան միջին ջերմաստիճանը:



28 Ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Վրաստանում տեղական մանգանի, ներմուծվող երկաթի հիման վրա աշխատում է Ռուսթավիի լիրվ ցիկլի մետալուրգիական կոմբինատը:
2) Վրաստանի մակերևույթում ընդարձակ հարթավայրերի շնորհիվ գյուղատնտեսական հանդակները զբաղեցնում են երկրի հողային ֆոնդի 90%-ը:
3) Վրաստանի կլիման արևելքում խոնավ է, արևմուտքում` չորային:
4) Վրացիները կազմում են երկրի բնակչության մոտ 98%-ը:

29 Բնակչության բնական աճի ավելացման ուղղությամբ առավել ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն են վարում.

1) Ֆրանսիան և Գերմանիան
2) Նիգերիան և Սուդանը
3) Ինդոնեզիան և Հնդկաստանը
4) Չինաստանը և Պակիստանը

30 Խորհրդարանական հանրապետություններ են.

1) Ռուսաստանը և Վրաստանը
2) Ադրբեջանը և Բրազիլիան
3) Իտալիան և Իսրայելը
4) Ֆրանսիան և Հունաստանը

31 «Պետություն-էլեկտրաէներգետիկայի մասնագիտացման ճյուղ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ո՞րն է *սխալ:*

1) Նիդեռլանդներ-ջրային էներգետիկա
2) ԱՄՆ-ջերմային էներգետիկա
3) Ֆրանսիա-ատոմային էներգետիկա
4) Իսլանդիա-ջերմային էներգետիկա

32 Ո՞րն պնդումն է ճիշտ:

1) Մերձարևադարձային և արևադարձային երկրները մասնագիտանում են ցիտրուսային պտուղների մշակման գծով:
2) Աշխարհում խոզերի գլխաքանակի շուրջ 50%-ը բաժին է ընկնում Ասիայի մահմեդական երկրներին (Իրան, Սաուդյան Արաբիա և այլն):
3) Հացահատիկ արտահանող երկրներից են Եգիպտոսը, Ճապոնիան, Բրազիլիան, Հայաստանը:
4) Աքվակուլտուրան զարգացած է բարեխառն գոտու տափաստանների ու նոսրանտառների զոնայում:

33 Կյանքի միջին տևողության ցածր ցուցանիշներ ունեն.

1) Ճապոնիան և Ֆրանսիան
2) Ավստրալիան և Նոր Զելանդիան
3) Մոզամբիկը և Անգոլան
4) Շվեդիան և Շվեյցարիան

34 Աշխարհում նավթ արտահանող առաջատար երկրներ են.

1) Ֆրանսիան և Շվեյցարիան
2) Ուկրաինան և Թուրքիան
3) Իտալիան և Հունաստանը
4) Վենեսուելան և Նորվեգիան

**35** Տրված լճերից ո՞րն ունի սառցադաշտային ծագում:

1) Ուրմիա լիճը
2) Պարզ լիճը
3) Փարվանա լիճը
4) Քարի լիճը

**36** Տրված «լեռներ-ծագում» սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է սխալ:

1) Գուգարաց-հրաբխային
2) Արևելյան Սևանի-ծալքաբեկորավոր
3) Եղնախաղի-հրաբխային
4) Բարգուշատի-ծալքաբեկորավոր

**37** ՀՀ-ում ամենամեծ արտեզյան ավազանն է.

1) Շիրակինը
2) Արարատյանը
3) Սիսիանինը
4) Փամբակինը

**38** Ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Չոր, խիստ ցամաքային կլիման ձևավորվում է Արարատյան դաշտի մինչև 1000մ բարձրություններում:
2) ՀՀ-ում ցածրադիր գոտու համեմատ միջին բարձրության լեռնային գոտում տեղումների քանակը նվազում է` հասնելով 230-300մմ:
3) Միջերկրական ծովի կողմից եկող օդային զանգվածներն Աղստևի հովտով անցնում են Փամբակի գոգավորություն` բերելով շատ խոնավություն:
4) ՀՀ-ում առավելագույն տեղումները թափվում են ձմռանը, նվազագույնը` մայիս-հունիսին:

**39** Ո՞ր պնդումն է *սխալ:*

1) ՀՀ-ում ձկնաբուծությունը զարգանում է նաև Արարատյան դաշտի աղակալած հողերում ստեղծված արհեստական լճակներում:
2) ՀՀ ամբողջ տարածքում անասնապահությունը զարգացել է բացառապես բնական արոտային թարմ խոտի բազայի վրա:
3) ՀՀ խաղողագործական շրջաններ են Արփայի հովիտը և Զանգեզուրի հարավը (Մեղրի):
4) Սևան-Հրազդան ոռոգչաէներգետիկ համակարգի միջոցով սնվում են Արարատյան դաշտի մի շարք մայր ջրանցքներ:

**40** ՀՀ-ում ոչ տեղական հումքի վրա հիմնված մետաղաձուլության արտադրություն է.

1) պղնձինը
2) ալյումինինը
3) ոսկունը
4) մոլիբդենինը



**63** Բնութագրումով որոշել երկիրը:

Հարավ-արևմտյան Ասիայի տարածքի մեծությամբ երկրորդ երկիրն է: Երկրի հարավային ափերը ողողում են Հնդկական օվկիանոսի ջրերը: Բնակչության մեծ մասը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը: Ո՞րն է այդ երկիրը:

1) Հնդկաստան
2) Աֆղանստան
3) Իրան
4) Թուրքիա

**64** Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:*

1) Բացակայում են գործող հրաբուխները:
2) Ամենաբարձր գագաթն ունի ավելի քան 5000 մ բարձրություն:
3) Շրջապատված է եզրային լեռների համակարգերով:
4) Մեծ Մասիսից դեպի արևմուտք ձգվում է Հայկական Պար լեռնաշղթան:

**65** Ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:
2) Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաները մասնատված են Արփայի և Արաքսի գետահովիտներով:
3) Փամբակի և Ծաղկունյաց լեռները արտաքին շարի լեռներ են:
4) Գեղամա լեռնավահանը ճառագայթաձև մասնատվել է Գեղարոտի, Ամբերդի խոր հովիտներով:

**66** Տրվածներից ո՞րն է բնորոշ ՀՀ չոր մերձարևադարձային կլիմայի տիպին:

1) օդի միջին հունվարյան ջերմաստիճանը տատանվում է $+10^0$-ի շուրջ
2) տարածվում է 1500-2000 մ բարձրություններում
3) ձմեռը կարճատև է և մեղմ
4) տեղումների միջին տարեկան քանակը հասնում է 800-900 մմ-ի

**67** Ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Արարատյան դաշտին բնորոշ է գծային տարաբնակեցումը:
2) ՀՀ-ն հարևան պետությունների համար բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:
3) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:
4) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:

**68** ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Խաղողի մշակության գլխավոր շրջաններից է Լոռու սարահարթը:
2) Խաղողի մշակության վերին սահմանը 2100-2200 մ բացարձակ բարձրություններն են:
3) ՀՀ գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
4) Հացահատկի ցանքատարածություններում գերակշռում է աշնանացան ցորենը:

57 Տրված կլիմայական գոտիներից ո՞րն է Եվրասիայում զբաղեցնում ամենամեծ տարածքը:

1) արևադարձային
2) հասարակածային
3) արկտիկական
4) բարեխառն

58 Ո՞ր զույգում տրված անապատներն են գտնվում Հարավային կիսագնդի արևադարձային կլիմայական գոտու սահմաններում:

1) Ռուբ էլ Խալի և Լիբիական անապատ
2) Կալահարի և Ատակամա
3) Սահարա և Թար
4) Կարակում և Ավազային Մեծ անապատ

59 Ո՞ր զույգում տրված երկրներում է կյանքի միջին տևողության ցուցանիշը ամենացածրը:

1) Շվեդիա և Իրան
2) Անգոլա և Զամբիա
3) Ճապոնիա և Նիգերիա
4) Ավստրալիա և Կանադա

60 Տրված պնդումներից ո՞րն է ուրբանիզացիայի վերաբերյալ տեղեկատվություն (ինֆորմացիա) ներառում:

1) Եթե 1900թ. քաղաքներում էր ապրում աշխարհի բնակչության 13.3 %-ը, 1950թ.՝ 29.3%-ը, ապա 2008թ.՝ 50%-ը:
2) Հնդկաստանը, Չինաստանը ունենալով մարդկային և բնական հսկայական ներուժ, այնուամենայնիվ ՀՆԱ-ի 1 շնչի ցուցանիշով զիջում են զարգացած երկրներին:
3) Բնակչության թիվն ու խտությունը մեծ է այն երկրներում ու տարածաշրջաններում, որտեղ բարձր է բնակչության վերարտադրությունը:
4) Բնակչության խտության ցուցանիշը տարածքի բացարձակ բարձրության մեծացմանը զուգընթաց նվազում է:

61 ՌԴ տրված քաղաքներից ո՞րն է ալյումինի արտադրության խոշոր կենտրոն:

1) Լիպեցկ
2) Կրասնոդար
3) Իվանովո
4) Բրատսկ

62 Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
2) Արտահանության մոտ կեսը բաժին է ընկնում հանքային հումքին և վառելիքին:
3) Հյուսիսային Եվրոպայում տարածքով ամենամեծ հանրապետությունն է:
4) Աշխատանքային ռեսուրսների գերակշիռ մասը ընդգրկված է տնտեսության սպասարկման ոլորտում:



41 Արագածոտնի մարզում ո՞ր մայր ջրանցքների շնորհիվ են ընդլայնվել ոռոգովի հողատարածքները:

1) Լոռու և Նալբանդի
2) Մասրիկի և Կոտայքի
3) Շիրակի և Լոռու
4) Թալինի և Արզնի Շամիրամի

42 Տրված մարզերից ո՞րը միայն մեկ մարզի հետ ունի ընդհանուր սահման:

1) Շիրակի մարզը
2) Տավուշի մարզը
3) Արմավիրի մարզը
4) Սյունիքի մարզը

43 Այժմ ՀՀ երկաթուղային ցանցի միջին խտությունը կազմում է մոտ.

1) 30 կմ/1000կմ$^2$
2) 35 կմ/1000կմ$^2$
3) 22 կմ/1000կմ$^2$
4) 25 կմ/1000կմ$^2$

44 Ջրի կենսաբանական մաքրման մեթոդը հիմնված է.

1) խեցգետինների՝ ջրի մեջ լուծված նյութերով սնվելու վրա
2) հոսող ջրի պոտենցիալ էներգիայի օգտագործման վրա
3) ջրլող թռչունների փետուրների կլանման հատկության վրա
4) մանրէների կենսագործունեության օգտագործման վրա

45 Անագի պաշարներով հարուստ է.

1) Ինդոնեզիան
2) Վրաստանը
3) Գերմանիան
4) Նիդեռլանդները

46 Աշխարհում ամենաշատ ջուր սպառվում է.

1) գյուղատնտեսության մեջ
2) ջրամբարներում ջրի կուտակման արդյունքում
3) արդյունաբերության մեջ
4) կոմունալ-կենցաղային տնտեսության կողմից

47 Ընդերքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում է.

1) ընդերքի ռեսուրսների համալիր յուրացումը
2) հանքարդյունահանման հին ավանդական մեթոդների վերականգնումը
3) հանքավայրերում աղքատ պաշարներով թափոնների կուտակումը
4) պոչամբարներում չկորզված նյութերի կուտակումը

48 **Մթնոլորտի ստորին շերտի տաքացումը ջերմոցային գազերի ու երկրի մակերևույթից արձակվող երկարալիք ճառագայթների կողմից կոչվում է.**

1) ջերմաստիճանի տատանման լայնույթ
2) ջերմոցային տնտեսություն
3) ջերմոցային էֆեկտ
4) ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա)

49 **Քարտեզի վրա Թեղենիս գագաթը ո՞ր տառով է նշված:**

1) Գ
2) Դ
3) Ա
4) Բ




50 **Քարտեզի վրա Դիլիջան քաղաքը ո՞ր տառով է նշված:**

1) Է
2) Ը
3) Ե
4) Զ



**Բ մակարդակ**

51 **Հորիզոնի ո՞ր կողմն է ցույց տալիս 225$^0$ ազիմուտը:**

1) հարավ - արևելքը
2) հարավ - արևմուտքը
3) հյուսիս - արևելքը
4) հյուսիս - արևմուտքը

52 **Ժամը քանիսը կլինի Երևանում, եթե Լոնդոնում ժամը 12 $^{00}$-ն է:**

1) 15 $^{00}$
2) 24 $^{00}$
3) 9$^{00}$
4) 12 $^{00}$

53 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Լեռնային շրջաններում ըստ բարձրության մթնոլորտային տեղումների քանակը նվազում է:
2) Օդի ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը հասարակածային լայնություններում փոքր է:
3) Վերնոլորտը մթնոլորտի Երկրի մակերևույթին ամենամոտ շերտն է:
4) Գիշերվա և ցերեկվա հերթափոխության գլխավոր պատճառը մթնոլորտի շրջանառությունն է:

54 **Տրված ապարներից ո՞րն է առաջանում, եթե մագման չի հասնում Երկրի մակերես, այլ սառչում է կես ճանապարհին, երկրակեղևի խորքում:**

1) գրանիտ
2) կերակրի աղ
3) այրվող թերթաքար
4) կվարց

55 **Համաշխարհային օվկիանոսում ներծին (ներքին) ուժերի ազդեցությամբ առաջանում է՝**

1) ցունամի
2) օվկիանոսային հոսանք
3) մակընթացություն
4) տեղատվություն

56 **Մերձարևադարձային գոտու կլիմայի տիպերից որի՞ն են բնորոշ չոր և տաք ամառներ և մեղմ ու խոնավ ձմեռներ:**

1) մուսսոնային
2) խոնավ
3) ցամաքային
4) միջերկրածովային